

## Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի 2015 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը՝ կայացած 17.07.2015 թ-ին. ժամը 14.00-ին

Նախագահությամբ՝

Ռ.Մարգարյանի

քարտուղարությամբ՝

Գ.Հովհաննիսյանի

մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի գյուղվարչության գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Ռ. Սարիբեկյանի

Արմավիր գյուղական համայնքի հաշվետու զեկուցմանը ներկա են գտնվում համայնքի ավագանու անդամները, գյուղապետարանի աշխատակազմը, համայնքի հիմնարկ-ծեռնարկությունների տնօրենները և աշխատակիցները, ինչպես նաև համայնքի մոտ 30 բնակիչներ:

**Լսեցին** - Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավար՝ Ռ.Մարգարյանի 2015 թվականի 1-ին կիսամյակի հաշվետու զեկույցը:

Պարոն Ռ.Մարգարյանը հաշվետու զեկույցում ներկայացրեց 2015թ-ի 1-ին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ, բյուջեի մուտքային և ծախսային կատարողականը, ինչպես նաև համայնքին վերաբերվող այլ հիմնախնդիրներ:

Արմավիր գյուղապետարանի կողմից համայնքում շաբաթը երկու օր կատարվում է աղբահանություն, մի քանի անգամ հիմնովին մաքրվել է Արմավիր գյուղի գերեզմանատուն տանող ճանապարհը և Արմավիր-Արևիկ ճանապարհի եզրերի աղբակույտերը:

Արմավիր համայնքի ենթակայության տակ են գտնվում Արմավիրի մանկապարտեզը, Արվեստի դպրոցը Մշակույթի տունը ,և դասական ոճի ըմբշամարտի թիմը, որոնք ֆինանսավորվում են համայնքի բյուջեից:

Արմավիրի գյուղապետարանը կազմակերպել է մի շարք միջոցառումներ՝ Հայկական բանակին, մայրության և գեղեցկության օրվան, Շուշիի ազատագրման և Հայրենական Մեծ Պատերազման տարած հաղթանակին, ինչպես նաև Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին , նվիրված

1-ին կիսամյակի ընթացքում 1080,0 հազ.դրամ դրամական օգնություն է հատկացվել Արմավիր համայնքի սոց անապահով ընտանիքներին:

Արմավիրի գյուղապետարանի կողմից իրականացվում է խմելու ջրի ներքին ցանցի ընթացիք շահագործում՝ վերացվում են առաջացած վթարները, իրականացվում են հակահամաճարագային միջոցառումներ, ընդ որում, վերը նշված ծառայությունները իրականացվում են հողի հարկի; գույքահարկի; հողի վարձավճարի և այլ մուտքերի հաշվին;

Համայնքի ղեկավար Ռ.Մարգարյանի հաշվետու զեկույցից հետո արտահայտվեցին համայնքի «բնակիչներ» Թեմուր Աղայանը, Սամվել Ստեփանյանը, որոնք մատնանշելով համայնքի բնակչության կենսամակարդակի խնդիրը և համեմատելով 2015թվականի 1-ին կիսամյակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ շեշտեցին համայնքային իշխանությունների կողմից մատուցվող ծառայությունների ավելացումը՝ մասնավորապես աղբահանման գործի ավելի որակով կազմակերպումը, գիշերային լուսավորության ավելացումը, գյուղացու կողմից արտադրված բերքի իրացման գործընթացում առկա խոչընդոտների հնարավոր վերացումը: Ելույթ ունեցողները նաև նշեցին որ աղբահանման և խմելու ջրի մատակարարման համար գյուղապետարանը առանձին վճար չի գանձում և այտ ծառայությունները մատուցում է անվճար: Ներկաները հույս հայտնեցին, որ համայնքային իշխանությունները՝ Ռ.Մարգարյանի ղեկավարությամբ այսուհետև էլ ջանք ու եռանդ չեն խնայի, համայնքի բնակիչների կյանքի որակը բարձացնելու ուղղությամբ կատարվելիք աշխատանքներում:

Արտահայտվեցին նաև ավագանիներ՝ Թամարա Պողոսյանը և Արմեն Սարգսյանը, որոնք նշեցին, որ իրոք համայնքում կատարվել է մի շարք բարեփոխումներ, սակայն համայնքն ունի ցավոտ կողմեր դրանցից են՝

- խմելու ջրի ջրագծերի կապիտալ վերանորոգումը,
- Մանկապարտեզի վերանորոգումը
- Արմավիր գյուղի եկեղեցու կառուցումը,
- Ռոռզման համար՝ 4 խորքային հորերի վերականգնումը:

Այնուհետև ելույթ ունեցավ մարզպետարանի ներկայացուցիչ՝ Ռ. Սարիբեկյանը՝ որը դրական գնահատելով կյանքի որակի դրական տեղաշարժը միևնույն ժամանակ ներկաների ուշադրությունը հրավիրեց այն հանգամանքին, որ գյուղապետարանի կողմից մատուցվող ծառայությունները ուղղակիորեն կապված են համայնքի բնակիչների վճարվելիք հարկային պարտականությունների հետ:

Ռ. Սարիբեկյանի կողմից համայնքի ղեկավարի 2015 թվականի տարեկանի 1-ին կիսամյակի հաշվետվությունը գնահատվեց դրական:

Համայնքի ղեկավար՝		Ռ.Ֆ.Մարգարյան
Քարտուղար՝		Գ.Մ.Հովհաննիսյան